

ՀՀ Արագածոտնի մարզպետ Դավիթ Գևորգյանը աշխատանքային այց է կատարել Մաստարա համայնք

30.10.2018

ՀՀ Արագածոտնի մարզպետ Դավիթ Գևորգյանը աշխատանքային այց է կատարել Մաստարա համայնք: Մարզպետը շրջել է «Մաստարչեդո» ՍՊԸ-ին պատկանող պանրի գործարանում, ծանոթացել վերջինիս գործունեությանն ու արտադրատեսականուն: Ընկերության տնօրեն Էդգար Մկրտչյանը մարզպետին ներկայացրել է գործարանի ընդլայնման ծրագիրը, որի արդյունքում կավելանա մթերվող կաթի ծավալը և կստեղծվի 25-30 աշխատատեղ:

Շուրջ 20 տարի գործող գործարանն այժմ արտադրում է ավելի քան 15 տեսակի պանիր, որոշ պանրատեսակների միակ արտադրողն է Հայաստանում: Արտադրանքի մի մասն իրացվում է տեղական շուկայում, իսկ մի մասը արտահանվում է Ռուսաստան: Գործարանն ունի 10 հիմնական աշխատող, սակայն սեզոնայնությամբ պայմանավորված՝ ստեղծվում են ժամանակավոր աշխատատեղեր: Գործարանի հարակից տարածքում հիմնվել են ծիրանի, սև սալորի և ընկուզի այգիներ՝ ընդհանուր 3200 ծառ: Նախատեսվում է կառուցել մրգի չորանոց, որտեղ էլ իրացվելու է բերքը:

Ներդրումային ծրագիրը հավանության է արժանացել մարզպետի կողմից, և նա առաջարկել է այն առավել մանրամասն քննարկել՝ օժանդակություն ցուցաբերելու համար: